CONVERSE BANK

TRUSTED BY GENERATIONS

«05» 02 2026

№ COO/0286

**Հավելված 2**
**«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/20»* ծածկագրով**
**էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ԵՐԱՇԽԻՔ N** COO/0286

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/20 ծածկագրով «ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԹՎՈՎ 30 ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴՅՈՒՐԱԿԻՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻՆ» «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 4,240,000 (չորս միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000466 /հայտի ապահովում/ հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև բենեֆիցիարի կողմից թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/20 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված **մեկ հարյուր քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 31.07.2026թ.-ը ներառյալ**: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ arsen.soghomonyan@escs.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

*Իրավասու անձ*

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ, 00000291
ք. ԵՐԵՎԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 26/1
Վարկային գործառնությունների համար
Իրավասու անձ
Authorized person
Աննա Առաքելյան
Anna Arakelyan
ստորագրություն / signature
For Credit Operation
26/1 V. SARGSYAN str., YEREVAN
CONVERSE BANK CJSC, 00000291

*Պատասխանատու՝ Նարինե Ղալումյան*
*Ներքին հեռախոսահամար՝ 2225*